Գիրքը յուսապատճենահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԱԿՈՒՐՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱԿԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ
ՁԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru


Հայ հանրագիտարանի գլխավոր խմբագիր
Հովհաննես Հովսեփյան
Գրականություն

Ինչպես
Ինչպես
Տուգանքներ
չկան
Դրդի
Ալեքսանդր
Բաղ

ԳՄԴ 85.35
2—358

Հանրահայտ անպարար Համայակ ՀԱԿՈԲՅԱՆԸ մատչելի ձևով ձեզ է ներկայացնում այն անպարարությունների գաղտնիքները, որոնք զարմանք ու հիացմունք են պատճառում աշխարհի միլիոնավոր հանդիսականների: Գիրքը փաստորեն անպարարության դասագիրք է ցանկացած ընթերցողի համար:

2—358 Ձեզ հաջող բեմ եմ մազթում: [Անպարարության մասին] խմբ. Ե. Խաչիկյան, թարգմ.՝ Մ. Հարությունյան.— Եր.: «Պարբերական» հրատ., 1992.— 72 էջ:

2 1908000000 / 774 (02) 92 ԳՄԴ 85.35

ISBN 5-8079-0401-x

C Պարբերական



Դուք վատ տրամադրությո՞ւն ունեք: Հարկ չկա վհատվելու, վերցրեք այս գիրքն ու կարդացեք: Հեղինակը հուսով է, որ այն ոչ միայն ձեր տրամադրությունը կբարձրացնի, այլև կզբաղեցնի ձեզ հյուր եկած բարեկամներին:

Սակայն անպարարության ցուցադրումը լոկ հրապուրանք կամ զվարճալիք չէ: Այն ամենից առաջ աշխատանք է: Այստեղ պետք է գլուխն էլ աշխատի՝ երբ արդեն հայտնի հնարքների նոր տարբերակներ ես փնտրում, անշարժ չեն մնա նաև ոտքերը: Ծանոթանալով գրքին, դուք կհասկանաք թե ինչու: Դե, խանութները չափչփելու հարկ էլ կլինի: Նախ պետք է աչք ածել «խաղալիքի տանը», հետո՝ «արդուզարդի առարկաներ» խանութում, նույնիսկ՝ դեղատանը: Համ էլ կիմանաք, թե որտեղ ինչ է վաճառվում, կօգնեք տնեցիներին: Դուք կկարողանաք տունը կարգի բերել, կդասդասեք հին, անպետք իրերը, որոնց մեջ, հավանաբար, նույնպես կգտնեք այնպիսի մի բան, որը պետք կգա ձեր անպարարությունների համար:

Սակայն ձեռնածուի համար ամենագլխավորը ձեռքերն են՝ ճարպիկ, մարզված, կպչուն, խիստ զգայուն: Ահա տեսեք, թե ինչպես են աշխատում անպարարները ու ձեռնածուները: Գեղեցիկ ու թեթև: Նրանց ձեռքերը առաջ գալով, թևածում են օդում, համարյա չհպվելով առարկաներին: Այդ հպումներն անընկալելի են, որովհետև

դրանք կայծակնային են:

Այդ անկաշկանդ շարժումներն ամենօրյա երկարատև պրպտումների արդյունք են: Ձեզ նման մարզումներ պետք չեն, եթե, իհարկե, դուք չեք պատրաստվում պրոֆեսիոնալ արտիստ դառնալ: Սակայն հանդիսականների առջև չնախապատրաստված հանդես գալն էլ մի բան չէ: Փորձելն անհրաժեշտ է: Եվ ամենեին էլ ոչ մեկ անգամ: Փորձեք համարը սկզբից մինչև վերջ կատարել մեծ հայելու առջև և անմիջապես կըզգաք, թե ինչը դեռ հղկելու կարիք ունի, և ինչն է արդեն ստացվում հեշտ ու հանգիստ:

Կան հիմնական կանոններ, որ պարտադիր են և՛ պրոֆեսիոնալների, և՛ ինքնագործ արտիստների համար: Դրանք հարկավոր է լավ հիշել:

Եվ այսպես՝

1. Չի կարելի ցուցադրել հնարքը, քանի դեռ այն փորձված չէ մինչև վերջ, և քանի դեռ այն չի ստացվում անխաթար, թեթև, առանց թերության:

2. Ինչքան էլ հանդիսականը խնդրի, երբեք մի կրկնեք նույն համարը, եթե չունեք դրա կատարման երկրորդ տարբերակը:

3. Մի վախեցեք, մանավանդ անհաջողություններից, հաստատակամորեն շարունակեք ներկայացումը: Ոչ ոք երաշխավորված չէ սխալվելուց: Ավելի լավ է, երբ սխալը հաջողվում է օգտագործել հոգուտ քեզ, ցույց տալով, թե որքան դժվար է արտիստ լինելը:

Լինում են կյանքում հրաշքներ,
Հրաշքներ՝ և ուրիշ ոչինչ.
Ֆոկուսները՝ հրաշքներ են փոքրիկ:
Ֆոկուսներ,
Ֆոկուսներ բոլորն են սիրում:

Թանկագին բարեկամներ: Լինո՞ւմ են կյանքում հրաշքներ: Այո, լինում են: Իհարկե, ոչ այնքան անհավանական, ինչպես հեքիաթներում: Դրանք փոքրիկ հրաշքներ են, որ ինքներդդ կարող եք անել:

Ձեզանից յուրաքանչյուրը կարող է կախարդ հռչակվել: Սակայն անպարար դառնալը հեշտ չէ: Դրա համար դուք պետք է մեծ համբերություն և համառություն ունենանք: Համարի անկաշկանդ կատարման կարելի է հասնել երկար պարապմունքների շնորհիվ: Իհարկե, այս գրքում հավաքված են ոչ բարդ ֆոկուսներ, սակայն հանդիսատեսի առջև հանդես գալ առանց լրիվ վստահ լինելու, որ այն կկատարվի առանց փոքր-ինչ վրիպումի, չի կարելի: Ելույթն իրոք տպավորիչ է միայն այն դեպքում, երբ ամեն ինչ հեշտ ու հանգիստ է ընթանում:

Ձեր ելույթը կգեղեցկացնի երաժշտությունը: Դուք կարող եք մեկնաբանել ձեր ելույթը, այսինքն, զրուցել հանդիսականների հետ: Զրույցը պետք է լինի անկաշկանդ, սրամիտ: Դա անմիջական կապ է ստեղծում դահլիճի հետ:

Եվ այսպես, երբ դուք անպարարությունների կատարման որոշակի փորձ ձեռք կբերեք, կարող եք այն ցուցադրել ձեր հարազատներին ու բարեկամներին: Կտեսնեք՝ ինչ տպավորություն կըգործի ձեր վարպետությունը: Դե, իսկ հետո վստահ բեմահարթակ ելեք:

Թանկագին բարեկամներ, ես ձեզ հաջողություն եմ մաղթում մարդկանց նրաշքներ պարգևելու դժվարին, բայց հրապուրիչ գործում:

ՀԱՄԱՅՆԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ




Ծանոթացեք
փոքրիկ
հրաշքներից

Ձեզ չեն խաբի

Առաջարկում ենք մի հնարք ամպարարությունների «կենդանի» առարկաներով շարքից: Այս համարի ժամանակ կենդանանում է ոչ մեծ թեթև գնդակը: Ձեռնածուն ձեռքերը կիսաշրջանի տեսքով օդակում է առջևում՝ հպվելով փորին: Գնդակը՝ ափի մեջ է: Սակայն հանկարծ այդ գնդակը, ենթարկվելով ձեռնածուի հայացքին, սկսում է աջ ձեռքով վեր բարձրանալ, ապա գլորվել ցած և նորից վեր՝ մյուս ձեռքով. ապա՝ նորից ետ:

Բայց դե դուք էլ փորձառու մարդիկ եք, ձեզ խաբելն այնքան էլ հեշտ չէ: Հասկանալի է, գնդակն ինքնուրույն վերուվար անել չի կարող: Նշանակում է, այն պարզապես հարկավոր է քաշել թելով: Եվ դուք, իհարկե, միանգամայն ճիշտ եք: Սակայն նախ պատրաստենք բեմիրերը (ռեկվիզիտները):

60—70 մմ տրամագծով գնդակը կարելի է սոսնձել կամ միահյուսել ամուր թղթի կամ ստվարաթղթի շերտերից: Կարելի է օգտագործել նաև թեթև պլաստմասսայե գնդակ: Վերցրեք 50—60 սմ երկարությամբ բարակ, ամուր, սև թել (ցանկալի է՝ կապրոնե) և այն ամրացրեք գնդակին: Հյուսկեն գնդակին բավական է թելը կապել, իսկ պլաստմասսայից



պատրաստվածը հարկ կլինի երկու տեղից ծակել, իսկ թելի ծայրին ամուր հանգույց անել (թելը չպետք է կտրվի համարի կատարման ժամանակ): Հյուսկեն գնդակի ևս մի առավելություն նշենք. հանդիսականները տեսնում են, որ նրա ներսը դատարկ է, և թևի վրայով գնդակը շարժող ոչ մի գաղտնի մեխանիզմ չկա: Թելի մյուս ծայրին փոքր ուլունքահատիկ ենք ամրացնում, և մեր ոչ բարդ բեմիրը պատրաստ է:

Կատարողը ուլունքահատը բռնում է ատամներով և գնդակը ձեռքին դուրս գալիս բեմ: Հետո նա գնդակը դնում է ափին և ձեռքերն օդակում: Թելը ձգվում է, և ահա՝ գնդակն արդեն կենդանացավ: Ենթարկվելով ամպարարի մոգական հայացքին, գնդակը վերուվար է անում ձեռքերի վրայով:

Ձեզ մնում է միայն համբերությամբ զինվել, պատրաստել բեմիրը և այն ցուցադրել մասնագիտորեն:

Հինգերորդը՝ «գաղտնի»

Ահա ևս մի հետաքրքիր հնարք: Այստեղ էլ անհրաժեշտ է ինչ-որ բան գուշակել, սակայն պետք է գուշակի ոչ թե հանդիսատեսը, այլ հենց ինքը՝ ճգպարարը: Ընդ որում, վերջինս, ի տարբերություն հանդիսատեսի, չպետք է սխալվի:

Ճգպարարը բոլորին առաջարկում է դիտել իր ձեռքին բռնած իրերը: Դրանք չորս երկարավուն թերթիկներ են, որոնցից յուրաքանչյուրի ծայրին սոսնձված կամ նկարված է մի գունավոր շրջանակ՝ կապույտ, դեղին, կարմիր և կանաչ: Ցուցադրելով թերթիկները, ձեռնածուն դրանք դնում է գրպանը: Այնուհետև նա խնդրում է հանդիսատեսին մտքում պահել չորս գույներից որևէ մեկը, սակայն բարձրաձայն չասել: «Ուշադրություն,— ասում է ձեռնածուն,— հիմա ես գրպանիցս կհանեմ հենց այն թերթիկը,



որը դուք պահել եք մտքներումդ»: Նա ձեռքը գրպանն է տանում և հանում թերթիկներից մեկը, սակայն ոչ ոքի ցույց չի տալիս: Եվ միայն հետո, երբ հանդիսատեսը բարձրաձայն անվանում է մտապահված գույնը, ճգպարարը

հնարավորություն է տալիս համոզվել, որ գրպանից հանել է հենց անհրաժեշտ թերթիկը:

Հանդիսատեսը զարմացած է: Ի՞նչ է սա. հեռազգացողությո՞ւն (տելեպատիա): Ամենևին

ոչ: Ձեռքերի ճարպկություն, ձեռքերի ճարպկություն և նորից՝ ձեռքերի ճարպկություն:

Իսկ ահա թե որն է գաղտնիքը: Որպեսզի հնարքը հաջողվի, անհրաժեշտ է մի քիչ չարչարվել: Ամուր ստվարաթղթից պետք է կտրել 10—12 սմ երկարությամբ և 1—1,5 սմ լայնությամբ նույնանման թերթիկ: Այնուհետև գունավոր թղթից կտրում եք նույն տրամագծով ութ շրջանակ՝ երկուական յուրաքանչյուր գույնից: Չորս թերթիկների վրա սոսնձում եք չորս տարբեր գույնի շրջանակները: Դրանք պետք է սոսնձվեն թերթիկների ծայրին մոտ: Դրանք ճգպարարը կցուցադրի հանդիսատեսին:

Իսկ հետո անհրաժեշտ է պատրաստել հինգերորդ «գաղտնի» թերթիկը: Նրա վրա սոսնձում եք մնացած գունավոր շրջանակները՝ երկու կողմից յուրաքանչյուր ծայրին մեկական շրջանակ: Թերթիկները երկու կողմից էլ պետք է լինեն նույն գույնի: Լավ կլինի դրա համար վերցնել սպիտակ ստվարաթուղթ:

Հատուկ նախապատրաստության կարիք ունի նաև գրպանը: Նրա մեջ անհրաժեշտ է կարել հատուկ «բաժին» «գաղտնի» թերթիկի համար: Ստացվում է գրպանիկ գրպանում: Սա անհրաժեշտ է, որպեսզի կատարման ընթացքում հինգերորդ թերթիկը չփնտրես ողջ գրպանում, այլ հեշտ ու հանգիստ հանես անհրաժեշտ պահին՝ նույնիսկ գրպանին չնայելով:

Այժմ ամեն ինչ պատրաստ է, և կարելի է սկսել:

Ամպարարը «գաղտնի» թերթիկը դնում է գրպանիկը և դուրս գալիս բեմահարթակ: Նա ցուցադրում է չորս թերթիկները, այնուհետև դրանք թաքցնում գրպանում: Հենց որ հանդիսատեսը մոռանում է գույնը, ամպարարը «Իսկ հիմա ես գրպանիցս կհանեմ հենց այն թերթիկը, որը մոռացված է» բառերից հետո հանում է «գաղտնի» թերթիկը: Հանդիսականները թերթիկի գույնը չեն տեսնում, նրանք համոզված են, որ ձեռնածուն հանել է չորս թերթիկներից մեկը: Երբ գույնը բարձրաձայն արտասանվում է, ամպարարին այլ բան չի մնում, քան արագ նայել թերթիկին, բռնել այն հատուկ ձևով և ցուցադրել հանդիսականին: Թերթիկը պետք է բռնել մատներով՝ ոչ անհրաժեշտ գույնի շրջանակներ փակցված ծայրից: Թերթիկը հանդիսատեսին ցուցադրվում է անվանված գույնի կողմից: Այդպիսով՝ երկու ոչ անհրաժեշտ գույները ծածկված են ամպարարի մատներով, մեկը՝ ուղղված է իր կողմը, իսկ հանդիսատեսը տեսնում է միայն անհրաժեշտ գույնը:

Դա կարելի է բացատրել օրինակով: Ենթադրենք, անվանվել է կանաչ գույնը: Ամպարարը թերթիկը բռնում է կապույտ և դեղին շրջանակներով ծայրերից, կանաչը ցուցադրում է հանդիսատեսին, իսկ կարմիրը՝ թերթիկի մյուս երեսին է, այն չի երևում: Դադար...

Այնուհետև ամպարարը նորից թերթիկը դնում է գրպանիկը, նորից է խնդրում մտքում գույն պահել և նորից հանելով թերթիկը, այն ցուցադրում է հանդիսատեսին՝ անհրաժեշտ ձևով: Այսպես կարելի է կրկնել մի քանի անգամ:

Հնարքը հանդիսատեսի վրա ուժեղ ազդեցություն է գործում: Առավել մեծ է ազդեցությունը, եթե կատարման ընթացքում որևէ թերացում կամ սխալ չի թույլատրվում: Իսկ որպեսզի դրանք չլինեն, անհրաժեշտ է այն մի քանի անգամ կրկնել հայելու առջև: Եթե ամեն ինչ հաջող է ընթանում, նշանակում է կարելի է համարձակորեն դուրս գալ բեմ:

Պարզունակ հարմարանք

Բեմում իրարից 1,5—2 մետր հեռավորության վրա երկու աթոռ է դրված, որոնք կապված են լվացքի պարանով: Ամպարարը վերցնում է ջրով լի բաժակը և դնում պարանին: Բաժակը չի շրջվում:

Իհարկե, բաժակը պարանի վրա հենց այնպես չի կանգնում, դրա համար անհրաժեշտ է մի փոքրիկ գաղտնի հարմարանք՝ հանդիսատեսին անտեսանելի թել, որը կապված է բաժակին՝ պարանից 5—6 սանտիմետր բարձրության վրա: Հենց այդ թելն է պահում բաժակը: Այս պարզունակ հարմարանքն էլ հենց զարմանալի տպավորություն է թողնում:



Երկու գավաթ

Ամպարարական սեղանին հանդիսատեսը տեսնում է երկու գավաթ: Կատարողը բոլորին ցույց է տալիս, որ նրանք դատարկ են: Այնուհետև նա բաժակներից մեկի մեջ մի քիչ հնդկացորենի ձավար է լցնում: Ձավարը գավաթի մոտ մեկ երրորդն է բռնում: Այդ գավաթը ձեռնածուն ծածկում է դատարկ գավաթով, ամբողջ «կառույցը» բռնում է ձեռքին, ապա նորից այն դնում սեղանին: Բարձրացնելով վերին գավաթը, ամպարարը համոզում է հանդիսատեսին, թե ձավարն այնքան է շատացել, որ նույնիսկ թափվում է գավաթի կողքերից: Ամպարարը ձեռքով հավաքում է ձավարի ավելցուկը և գավաթները նորից իրար վրա դնում: Այնուհետև նորից բարձրացնում է վերին գավաթը, և բոլորը տեսնում են, որ հնդկաձավարի փոխարեն գավաթի մեջ ջուր է հայտնվել:



Կարծում ենք, հարցադրումը պարզ է. ի՞նչ ձևով ձավարը սկզբում շատացավ, ապա փոխարկվեց ջրի:

Հեշտ ընկալելու համար բացատրենք կետերով: Ուշադիր հետևեք.

1. Գավաթների ծայրերը հղկում ենք հղկաթղթով:
2. Վերցնում ենք ամբողջովին թափանցիկ պլաստիկատ (պլեկսիգլազ), նրանից կտրում ենք գավաթի տրամագծով շրջանակ:
3. Գավաթներից մեկի մեջ ջուր ենք լցնում և պլաստիկատի այդ շրջանակով ծածկում այնպես, որ օդ չմնա: Այժմ շրջված դիրքում էլ ջուրը չի թափվի:
4. Համարի սկզբում երկու բաժակներն էլ սեղանին դրվում են բերանքսիվայր: Այնուհետև ամեն ինչ շատ հասարակ է:
5. Դատարկ գավաթի մեջ լցնում ենք ձավարը և ծածկում ջրով բաժակով:
6. Շրջում ես գավաթները սեղանի վրա և բարձրացնում վերին գավաթը: Այսպիսով, ձավարը լցվում է պլաստիկատի վրա, և հանդիսատեսն այն տպավորությունն է ստանում, թե ձավարի քանակն ավելացել է:
7. Հավաքելով ձավարը, նորից այդ գավաթը ծածկում ենք մյուսով:
8. Մնում է միայն բարձրացնել վերին դատարկ գավաթը, ընդ որում՝ չմոռանալով նաև հանել թափանցիկ շրջանակը:

Ահա այդպես է գավաթում «հայտնվում» ջուրը:



Ուր կորավ մատանին

Անպարարի մատին մատանի է դրված: Այդ մատանին հանդիսատեսներից որևէ մեկն է սիրով տրամադրել նրան: Վառ, թեթև թաշկինակով ձեռնածուն ծածկում է ափը: Մատանին նույն տեղում է՝ համոզված են հանդիսականները: Եվ որպեսզի կասկածներ չմնան, անպարարն առաջարկում է հանդիսականներին ստուգել այդ: Նա մոտենում է մեկին, թեթևակի բարձրացնում է թաշկինակը և խնդրում շոշափել մատանին: Այո, այն ափի մեջ է: Նույնը անպարարը խնդրում է ևս մի քանի հանդիսականների: Իսկ հետո, իհարկե,



մատանին պետք է կորչի: Անպարարն արտասանում է մոգական բառերը, բարձրացնում թաշկինակը ափից, և... մատանին անհետացել է:

Մատանու տերը վշտացած է, մյուսները՝ զարմացած: Ո՞ւր կորավ մատանին: Անպարարը նորից է ափը ծածկում է թաշկինակով և նորից խնդրում հանդիսականներին ստուգել՝ դատա՞րկ է, արդյոք, ափը: Հերթով ստուգելով, հանդիսականները համոզվում են, որ ափում ոչինչ չկա: Նորից մոգական խոսքեր, թաշկինակի թափահարում և ապա՝ մատանին անպարարի ափի մեջ է:

Իսկ ամեն ինչ ահա թե ինչպես է կատարվում:

Հանդիսականների մեջ նստած է անպարարի ընթերական (ասիստենտը): Անպարարը թաշկինակով ծածկելով ափը, շրջում է հանդիսականների մեջ, իսկ իր ընթերակային մոտենում է ամենավերջում: Ահա՝ ընթերակայից պահանջվում է որոշակի ճարպկություն: Նրա խնդիրն է աննկատ վերցնել մատանին: Ահա և մատանին անհետացավ: Այնուհետև անպարարի օգնականը պարտավոր է նույնպես աննկատելի մատանին դնել տեղը:

Մնում է միայն մատանին վերադարձնել տիրոջը և շնորհակալություն հայտնել օգնության համար:

Յուրաքանչյուր հնարք

Անպարարական սեղանին սովորական բաժակ է դրված: Բաժակի վրա ձգված է բաց գույնի ռետինե թաղանթ: Իսկ թաղանթի վրա՝ տասկոպեկանոց մետաղադրամ: Անպարարը մոտենում է սեղանին և մատով սեղմում դրամը: Հո՛պ, և մետաղադրամը հայտնվում է բաժակի մեջ:

Հանդիսականները համոզված են, որ ռետինե թաղանթի վրա գաղտնի կտրվածք կա և, որպեսզի նրանց կասկածները ցրվեն, անպարարը հանում է այն ու փոխանցում հանդիսասրահ: Յուրաքանչյուրը կարող է ուշադիր նայել և համոզվել, որ այնտեղ ոչ մի անցք էլ չկա:

Լավ, այդ դեպքում ինչպե՞ս է մետաղադրամը հայտնվում բաժակում: Ուշադիր լսեք բացատրությունը:

Անհրաժեշտ է ամենասովորական բաժակ և ամենասովորական կոպեկ: Ռետինե թաղանթը պետք է կտրել բժշկական ռետինե ձեռնոցից: Այն կարելի է գնել ցանկացած դեղատնից, կարևոր է միայն, որ ռետինը շատ նուրբ լինի և մաշկագույն: Ռետինի կտորը պետք է կտրել շրջանաձև, մի քիչ ավելի մեծ տրամագծով, քան բաժակի տրամագիծն է: Կտրեցի՞ք ռետինե



մետաղադրամով

շրջանակը: Լավ է: Հիմա թող ձեր ընկերներից մեկը շատ ուժեղ ձգի այդ ռետինի կտորը, իսկ դուք մետաղադրամը դրեք շրջանակի կենտրոնում: Այժմ կարելի է բաց թողնել ձեռքերը: Մետաղադրամը մնում է ձգված նուրբ ռետինե թաղանթի մեջ, որը համարյա չի երևում: Ահա և ստացվում է, որ դրամը կարծես դրված է ռետինի վրա, իսկ իրականում՝ նրա տակ է:

Հիմա այդ «կառույցը» դրեք բաժակի վրա: Ձեր ընկերը ծայրերից բռնում է ռետինի կտորը, իսկ ձեզ մնում է միայն ուժեղ սեղմել մետաղադրամը, որը և ազատվելով «գերությունից», ընկնում է բաժակի մեջ:

Ահա այսպիսի արտասովոր հնարք: Դուք կարող եք ձեր բարեկամներին պատմել, թե ինչպես իրենց խաբեցիք, և բոլորդ միասին մի կուշտ կծիծաղեք:



Մեղավորը «գլխարկն» է

Ճպարարական սեղանին լայնեզր գլխարկ է դրված: Կատարողը մոտենում է սեղանին, վերցնում ստվարաթղթի թերթը, բռնում այն, ինչպես ցուցադրված է նկարում, երկու կողմից էլ ցույց է տալիս հանդիսականներին, այնուհետև դրանով ծածկում է գլխարկն այնպես, որ նրա երկու անկյուններն ուղղված լինեն հանդիսատեսին: Բռնելով թերթն անկյուններից, ճպարարն այն երկտակ ծալում է, ապա թեքում դեպի գլխարկը, արտասանում. «Կո-կո-կո» և ստվարաթղթից գլխարկի մեջ ձու է գլորվում (տես՝ նկարը): Այնուհետև ճպարարը նորից ստվարաթուղթը երկու կողմից ցուցադրում է հանդիսատեսին և կրկնում նույնը. աջ ձեռքի մատներով սեղմում է, իսկ ձախով բռնում է թերթի կենտրոնի եզրը: Այդպիսով, նրա ձեռքում երկտակ ծալած թերթն է: Նա բարձրացնում է թերթը և կենտրոնի եզրը ձախ ձեռքից փոխանցում աջին՝ շարունակելով բռնել անկյունները: Ազատված ձախ ձեռքով ճպարարը բռնում է մյուս երկու անկյուններից: Այնուհետև նա երկտակ ծալած թուղթը հորիզոնական դիրքով ձգում է և, ծայրից մի քիչ թեքելով գլխարկի վրա, բարձրացնում է աջ կողմը, արտասանում կախարդական բառերը. «Կո-կո-կո», «Ախալայ-մախալայ» և հնարավորություն է տալիս, որ ձուն գլորվի գլխարկի մեջ: Կրկնելով այս ամենը, ճպարարը ստեղծում է թերթում ձվի անընդհատ հայտնվելու պատրանք:

Անհրաժեշտ է.

1. Ամուր ստվարաթղթի թերթ (անթափանցիկ)՝ 40×40 սմ (30×30 սմ) թուխս նստած հավի նկարով:
2. Ձու:
3. Սև թել՝ 25—30 սմ:

Այ քեզ խնձոր

Երբևէ լսե՞լ եք «հասարակ ինչպես խնձորը» արտահայտությունը: Իրոք՝ խնձորը խնձոր է, ամենահասարակ: Իսկ եթե այն կախարդակա՞ն է... Փորձե՞նք: Խնդրեմ:

Ահա սկահակի մեջ խնձորներ են: Մենք դրանց դեռ կվերադառնանք: Իսկ առայժմ...

... Առայժմ աճպարարը բեմ է դուրս գալիս, գրպանից հանում սպիտակ թղթի փոքրիկ մի թերթ և մատիտ, տալիս դրանք հանդիսականներից որևէ մեկին և խնդրում թղթի վրա գրել անունը կամ ցանկացած բառ, արտահայտություն: Այնուհետև կատարողը թուղթը կեսից ծալում է, ոլորում խողովակաձև: Մի ձեռքում պահելով ոլորված թուղթը, նա մյուսով գրպանից հանում է թաշկինակը և նրա մեջ դնում թուղթը: Աճպարարը ջանադրաբար ոլորում է թաշկինակը՝ թաքցրած թղթի վրա, խնդրում է հանդիսատեսին պահել այն: Իսկ հիմա ժամանակն է վերադառնալ խնձորներին: Աճպարարը մոտենում է սեղանին և սկահակից մի խնձոր վերցնում: Տեսեք, թե այն ինչ գեղեցիկ է, կարմրաթուշ: Ցուցադրելով խնձորը հանդիսականներին, աճպարարը խնդրում է թաշկինակը պահողին ստուգել, թե տեղո՞ւմ է, արդյոք, թուղթը: Հանդիսատեսը մի քանի անգամ շոշափում է թաշկինակը և համոզվում, որ, այո, թուղթը տեղում է: Այնուհետև աճպարարը բռնում է թաշկինակի անկյունից և թույլատրում հանդիսականին բաց թողնել: Կախարդական խոսք, թափահարում և... թաշկինակի մեջ ոչինչ չկա: Գալարաթուղթն անհետացել է: Աճպարարը թաշկինակը դնում է սեղանին, վերցնում է դանակը և կիսում ձեռքում բռնած խնձորը:

Վերին կեսը հանում է և, ահա, այժմ բոլորը համոզվում են, որ խնձորն իրոք կախարդական է: Թաշկինակից անհետացած գալարաթուղթը հայտնվել է խնձորի մեջ: Աճպարարը խնդրում է հանդիսատեսին բացել թուղթը և կարդալ գրվածը: Ոչ մի կասկած՝ նույն գիրն է, նույն ձեռագիրը:

Ինչպե՞ս դա կատարվեց: Լսենք բացատրությունը:





Անհրաժեշտ է 3—4 գեղեցիկ խնձոր, վառ գունավոր, անթափանցիկ թաշկինակ՝ 25×25 սմ չափերով և դանակ: Գաղտնիքը հատուկ պատրաստված թաշկինակի և խնձորի մեջ է: Թաշկինակի անկյուններից մեկում կարում եք անտեսանելի «գաղտնի» գալարաթուղթ: Այն պետք է լինի ճիշտ և ճիշտ այն թղթի նման, որի վրա հանդիսականը պետք է գրի իր ցանկացած բառը կամ արտահայտությունը: Թղթերի չափերն են՝ 6×6 սմ:

Եվ այսպես: Վերցնելով հանդիսատեսից արդեն գրված թուղթը, աճպարարն այն ոլորում է և հանում թաշկինակը: Այժմ անհրաժեշտ է այնպես անել, որ «գաղտնի» գալարաթուղթն անկյունից ընկնի թաշկինակի կենտրոնը, իսկ իսկական գալարաթուղթը՝ գրածով, մնա աճպարարի ձեռքին: Թաշկինակը տալով հանդիսականին, կատարողը մոտենում է սեղանին, ուր սկահակի մեջ է հատուկ պատրաստված խնձորը: Այդ խնձորի մեջ նախօրոք բացված է փորվածք, որի մեջ հանգիստ կարող է մտնել գալարաթուղթը:

Հաջորդ պահն ամենաբարդն է ու պատասխանատուն: Երբ աճպարարը վերցնում է խնձորը, նա պետք է աննկատելի կերպով փորվածքի մեջ մտցնի գալարաթուղթը: Այն պետք է անել շատ արագ և աննկատ: Տեղին է նորից հիշեցնել ջանադիր փորձերի մասին:

Այժմ արդեն պարզ է, թե ինչպես է մեր «կախարդական» խնձորի մեջ հայտնվում գալարաթուղթը:

Այս համարի կատարմանը բնորոշ են բարի հումարը, վառ ֆանտազիան ու ճարպկությունը:

Կախարդական մատնոցը

Աստիճանաբար աջ ձեռքի միջնամատին ուղորդվում է մատնոց է: Կատարողը աջ ձեռքի երկու մատով հարվածում է ձախ ափին: Հարված, ևս մեկը .. և մատնոցը «ցատկում է» մյուս մատի վրա: Եվ մի քանի հարված՝ մատնոցը «վերադառնում է» նախկին տեղը: Հարվածներ՝ «ցատկ», հարվածներ՝ «ցատկ»... Ինչպե՞ս է այդ լինում:

Տեխնիկապես բանը դժվար չէ, սակայն բավական ճարպկություն է պահանջում: Ուշադիր նայեք նկարներին: Աճպարարը պարզապես փոխում է մատները, իսկ մատնոցը, հասկանալի է, չի շարժվում տեղից: Բոլորը չէ, որ անմիջապես կկարողանան կատարել այս: Արագ և աննկատելի ծալել մի մատը և բացել մյուսը այնքան էլ հեշտ չէ, ինչքան թվում է, անհրաժեշտ է ձեռքերի և մատների ճկունություն և որոշակի պատրաստվածություն: Անընդհատ փորձեք և ինքներդ կգտնեք հարվածների տեմպը: Այն չպետք է լինի շատ դանդաղ, այլապես հանդիսականը կհասկանա, որ մատներն են փոխվում, բայց և չպետք է շատ արագ կատարվի (հանդիսատեսը պետք է հասցնի տեսնել մատնոցի «ցատկը»):



Համերաշխ թաշկինակներ

Որպեսզի պարզապես երկու թաշկինակ ամուր և արագ կապես իրար, դարձյալ ինչ-որ ժամանակ է պահանջվում: Սակայն այդ գործողությունը կարելի է կատարել ակնթարթորեն: Ինչպե՞ս:

Ահա, աճպարարը վերցնում է երկու թաշկինակ և ցուցադրում հանդիսականներին: Այնուհետև այդ զույգը վերցնում է ձախ ձեռքը և նետում վեր... Զարմանալի է, սակայն թաշկինակներն արդեն ծայրերից ամուր կապված են իրար:

Գաղտնիքը հետևյալն է. հարկ է ունենալ փոքրիկ, մարմնագույն ռետինե օղակ, որը հագցնում ես ձախ ձեռքի մատներին (սկզբում միջնամատին ու ցուցամատին): Ցուցադրելով թաշկինակները հանդիսատեսին, աճպարարը երկուսն էլ փոխանցում է ձախ ձեռքին (այդ դեպքում ռետինե խողովակը պետք է հագցնել բութ մատին): Մնացյալը, ինչպես ասում են, տեխնիկայի հարց է. օղակը մատներից սահում է և բավականին ամուր օղակում թաշկինակների ծայրերը:



Թռչող փայտիկը

Աճպարարի ձեռքին կախարդական փայտիկ է: Ահա այն դուրս է թռչում ձեռքից և սկսում «թևածել» օդում՝ ենթարկվելով ձեռնածուի ձեռքի կախարդական շարժումներին:

Գաղտնիքը շատ պարզ է.

Անհրաժեշտ է ունենալ.

1. 60—70 սմ երկարությամբ, սև ներկված թեթև փայտիկ:
2. 50—60 սմ երկարությամբ սև թել: Թելի մի ծայրին բարակ մետաղե օղակ հագցրեք, մյուս ծայրը կապեք փայտիկին՝ կենտրոնից 1,5—2 սմ վեր:

Կատարման ժամանակ աճպարարն օղակը հագցնում է միջնամատին կամ ցուցամատին: Այնուհետև բաց է թողնում փայտիկը և... ահա այն «թևածում» է օդում: Այնուհետև փայտիկի ողջ «պարը» կախված է աճպարարի ճարպիկ ու ճշգրիտ շարժումներից: Փայտիկը «խոնարհաբար» կկատարի բոլոր շարժումները, միայն հիշեք՝ աշխատող ձեռքի ափը միշտ պետք է ուղղված լինի հատակին:



Օղակն անհետանում է

Ձեռնածուն դահլիճից երկու օգնական է հրավիրում բեմ: Այնուհետև վերցնում է ոչ մեծ մի պարան, դրան հագցնում մետաղե օղակ և պարանի ծայրերը տալիս օգնականներին: Նրանք կանգնում են դեմ-դիմաց և ձգում պարանը: Ձեռնածուն վերցնում է թաշկինակը, ծածկում օղակը և, հաշվելով մինչև երեքը, նորից բարձրացնում այն՝ օղակն անպարարի ձեռքին է:

Անհրաժեշտ է ունենալ.

1. Երկու բացարձակապես նման մետաղյա օղակ, որոնցից մեկը կտրվածք ունի:
2. 1 մետր երկարությամբ պարան:
3. 50×50 սմ չափերով ծաղկազարդ մետաքսե թաշկինակ:
4. Լայն գոտիով ժամացույց:

Անպարարը ժամացույցի գոտու տակ թաքցնում է անվնաս օղակը: Երկու օգնականներին բեմ հրավիրելով, նա բոլորի աչքի առաջ պարանին է հագցնում կտրվածքով օղակը և պարանի ծայրերը տալիս օգնականներին: Այնուհետև, ծածկելով թաշկինակով օղակը, նա արագ հանում է այն, թաքցնում ժամացույցի գոտու տակ, իսկ անվնաս օղակը նույն արագությամբ վերցնում ձեռքը: Մնում է բարձրացնել թաշկինակը և բոլորին ցուցադրել օղակը, որը զարմանալիորեն հայտնվել է ձեռնածուի ձեռքին:



Ծաղիկնե՞r, nrտեղից

Բեմում ամենասովորական աթոռ է դրված: Աթոռի թիկնակին գցված է նախշազարդ թաշկինակ: Աճպարարը վերցնում է թաշկինակը, ցուցադրում հանդիսատեսին երկու կողմից և ակնթարթորեն նրանից մի ծաղկեփունջ հանում: Նայեք նկարին և կհասկանաք գաղտնիքը: Այս աճպարարության համար անհրաժեշտ է ունենալ երկու օգնական, որոնք կլինեն եզրային կուլիսներում և երկու կողմից կբռնեն թելը, որի մեջտեղում կապված է ծաղկեփունջը: Վերջինս չի երևում՝ ծածկված է աթոռի թիկնակով:

Կատարողը վերցնում է թաշկինակը, ցուցադրում նախ մեկ, ապա մյուս կողմից, օգնականներն այդ ժամանակ ձգում են թելը, և ծաղկեփունջը հայտնվում է թաշկինակի թիկունքում: Աճպարարը ճարպիկորեն իջեցնում է անկյունը և ձեռքն արագ գցում ծաղկեփնջին:

Ամեն ինչ կախված է կատարողի ճարպկությունից, իհարկե՝ օգնականները ևս պետք է ուշադիր լինեն և գործեն հյամաձայնեցված:



Մտքերի ընթերցում՝ հեռվից

«Մտքեր ընթերցելու» գոյություն ունեցող պարբերականներից մեկն այսպես կոչված «ռիթմիկն» է: Ձեզ անհրաժեշտ է օգնական, իսկ առավել լավ կլինի՝ հմայիչ օգնականուհի: Որպեսզի այս մեթոդը լավագույնս յուրացվի, անհրաժեշտ է սովորել օգնականուհու հետ միաժամանակ մտքում հաշվել մեկից մինչև 10 այնպես, որ երբ հաշիվն ընդհատվի, երկուսիդ մտքում էլ նույն թիվը լինի: Պետք է հաշվել ոչ թե «մեկ, երկու, երեք...», այլ՝ «քը-սան-մեկ», «քը-սան-երկու» և այլն, զի այս թվերի արտասանությունն ինքնին ռիթմիկ է և յուրացնելն ավելի հեշտ է: Դրա վրա է կառուցված ողջ անպարարությունը:

Դուք մոտենում եք հանդիսականներից որևէ մեկին: Ձեր ձեռքին գրատախտակ է և կավիճ: Խնդրում եք 22նշալ որևէ թիվ, ենթադրենք՝ 65140: Դուք գրում եք թիվը և պարզ ու ընդհատ արտասանում: «Շնորհակալություն». դա հաշիվն սկսելու նշանն է: Ե՛վ դուք, և՛ ձեր օգնականուհին մտքում սկսում եք հաշվել. «քը-սան-մեկ», «քը-սան-երկու»... քը-սան-վեց»: Հասնելով 26-ին (իսկ պետք է հիշել, որ դա 6 թիվն է), դուք կավիճը դնում եք գրատախտակին այնպես, որ նրա հարվածի ձայնը լսելի լինի օգնականուհուն, դա «կանգառ» ազդանշանն է: Մի փոքր դադարից հետո ձեր օգնականուհին արտասանում է. «առաջին թիվը 6-ն է»:

Հենց որ սա ասվում է, սկսվում է նոր հաշիվը: Հասնելով 25-ին, արտիստը նորից կանգ առնելու ազդանշան է տալիս, այժմ այլ կերպ. սկսում է գրատախտակին գրել առաջին նշված թիվը՝ 6: Օգնականուհին նորից է լսում կավճի տկտկոցը, ընդհատում է հաշիվը և մի կարճ դադարից հետո արտասանում. «Երկրորդ թիվը 5-ն է»: Անմիջապես սկսվում է նոր հաշիվը, և արտիստն անմիջապես էլ սկսում է գրատախտակին գրել 5: Օգնականուհին լսելով կավճի ձայնը, ասում է. «հաջորդ թիվը 1-ն է», այնուհետև հաշվում է մինչև «քը-սան-չորս», և այդ պահին անպարարն անմիջապես գրում է նշված վերջին թվերը՝ 1 և 4, իսկ օգնականուհին, լսելով այդ և հասկանալով, որ այլևս հաշիվ չկա, մի փոքր դադարից հետո անվանում է վերջին թիվը՝ 0:

Ահա և ողջ գաղտնիքը: Անպարարությանը խորհրդավորություն տալու համար դուք կարող եք հենց սկզբից հանդիսականի ուշադրությունը հրավիրել այն բանին, որ դուք չեք «դիպչում» ձեր օգնականուհուն, չեք մոտենում նրան, չեք խոսում, ավելին՝ կարող եք հանդիսականներին առաջարկել շրջապատել նրան՝և հսկել: Անպայման խնդրեք պահպանել լռություն: Դե ի՞նչ, սկսենք...


33
Bruno

Հիանալի հիշողություն

Դուք քսան հանդիսականների բաժանում եք մաքուր քարտեր, որոնք համարակալված են 1-ից մինչև 20 թվերով: Այնուհետև դուք խնդրում եք յուրաքանչյուր քարտի վրա մի բառ գրել: Այնուհետև հավաքելով բոլոր քարտերը, խնդրում եք որևէ մեկին այն մեկ անգամ կարդալ՝ անվանելով քարտի համարը և բառը: Ցուցադրելով հիշողության իրր գերլարում, դուք խնդրում եք անվանել որևէ քարտի համար: Եվ ամեն անգամ, երբ ձեզ համար են ասում, դուք անմիջապես պատասխանում եք, թե ինչ բառ է գրված:

Գաղտնիքը հետևյալն է: Դուք պետք է ձեզ համար «գաղտնի բանալի» ունենաք, որն անհրաժեշտ է անգիր անել և պահել հիշողության մեջ:

Օրինակ.

1. հուշարձան
2. գինվոր
3. հեծանիվ
4. պուրակ
5. սղոց
6. սեպտեմբեր
7. կավ
8. կառամատույց
9. ձուկ
10. լապտեր
11. տուն
12. Ամերիկա
13. դպրոց
14. աղջիկ
15. տղամարդ
16. գրիչ
17. ավտոմեքենա
18. աղբանոց
19. ծով
20. աճպարար

Ենթադրենք, № 1 քարտում հանդիսատեսը գրել է «հովանոց», № 2-ում՝ «ծծակ» և այլն: Երբ հանդիսատեսը դանդաղ կարդում է համարները և բառերը, դուք մտքով առաջադրված բառով և ձեր «բանալի» բառով ձեզ համար պատկեր եք ստեղծում: Դրանից հետո, երբ ամեն անգամ կհնչի համարը, դուք կհիշեք այդ պատկերը, հետևաբար և հանդիսատեսի գրած բառը: Ասենք, երբ կարդան՝ «№ 1, հովանոց» դուք ձեր «բանալի» բառի՝ «հուշարձանի» հետ կստեղծեք պատկեր: Ասենք՝ կպատկերացնեք Գայի հուշարձանը՝ թրի ծայրին մի հսկա հովանոց, որը ծածկում է ողջ շրջակա պուրակն ու փողոցը: Եվ ամեն անգամ, երբ կհնչի № 1 թիվը, դուք կհիշեք այդ պատկերը և կանվանեք բառը՝ «հովանոց»:

Իհարկե, ամեն անգամ ձեր «հիանալի հիշողության» ցուցադրման ժամանակ բառերը կփոխվեն: Սակայն, օգտվելով այդ «բանալիից», դուք մի քիչ պարապելուց հետո, հիանալի արդյունքների կհասնեք և կզարմացնեք ձեր հանդիսատեսին, ես երաշխավորում եմ ձեր հաջողությունը...

Փուչիկների աշխարհում

Անպարարի մի ձեռքում կապույտ փուչիկ է, մյուսում՝ ասեղ: Նա ասեղով թեթևակի հպվում է փուչիկին: Փուչիկը պայթում է, սակայն, ի զարմանս հանդիսատեսի, պայթած փուչիկի փոխարեն անպարարի ձեռքին հայտնվում է մեկ ուրիշը, սակայն արդեն կանաչ գույնի:

Անհրաժեշտ է.

1. Երկու փուչիկ:
2. Ասեղ:

Կատարումից առաջ կապույտ փուչիկի մեջ դնում են կանաչը, այնուհետև հերթով փչում դրանք, նախ՝ արտաքին փուչիկը, հետո՝ ներսինը: Երկուսի ծայրերն էլ կապում են թելով:

Փուչիկների գույներն անհրաժեշտ է ընտրել այնպես, որ արտաքինից լինի առավել մուգը (կապույտ, ներսում՝ կանաչ, կամ կարմիր, ներսում՝ դեղին):

2. Արտաքին փուչիկը պետք է մի քիչ ավելի փչված լինի ներսինից:
3. Ասեղը պետք է թեթևակի հպել փուչիկին, որպեսզի հանկարծ չծակվի նաև ներսի «գաղտնի» փուչիկը:
4. Մինչ մի փուչիկը մյուսի մեջ դնելը, անհրաժեշտ է արտաքին փուչիկի մեջ տալք լցնել, որպեսզի փուչիկները չկպչեն իրար:



... Եվ թաշկինակների

Անպարարի ձեռքին սև-սպիտակ զոլերով թաշկինակ է: Հանդիսականները պարզ տեսնում են, որ զոլերը հորիզոնական են: Արագ թափահարում, և զոլերն արդեն ուղղաձիգ են:

Անհրաժեշտ է.

1. 60×60 սմ զոլավոր թաշկինակ:
2. 30 սմ երկարությամբ նեղ փայտիկ:

Գաղտնիքը հենց այդ փայտիկի մեջ է: Այն նախօրոք կարվում է թաշկինակի որևէ ծայրում: Անպարարը բռնում է թաշկինակի վերին անկյուններից: Այդ դեպքում «գաղտնի» փայտիկն ուղղաձիգ դիրքում է՝ ձախ կողմի ներքին մասում: Թափահարելու ժամանակ անպարարը աջ ձեռքը գցում է փայտիկով անկյունից, միաժամանակ բաց թողնելով թաշկինակի մյուս անկյունը: Զոլերն ակնհայտորեն ուղղաձիգ դիրք են ընդունում:

Անպարարության տպավորությունը կախված է կատարողի ճարպկությունից ու արագությունից և երկար մարզումներ է պահանջում:



Կախարդական քանոնը

Ամպարարը վերցնում է սովորական քանոնը, այն լայնակի դնում ձախ ձեռքի ափին: Այնուհետև ձեռքը շրջում է այնպես, որ ափի հետնամասն ուղղված է լինում հանդիսականին, իսկ ափը՝ քանոնով՝ դեպի բեմի խորքը: Քանոնը բաց ափին կպած է մնում՝ ասես սոսնձված լինի:

Անհրաժեշտ է ունենալ 30—40 սմ երկարությամբ աշակերտական երկու քանոն: Գաղտնիքը շատ պարզ է: Քանոնը պետք է դնել ձախ ձեռքի ափին, դաստակը բռնել աջ ձեռքով և ցուցամատով քանոնը սեղմել ձախ ձեռքի ափին: Այնուհետև բացել մատները: Քանոնը չի ընկնում:

Ավելի տպավորիչ դարձնելու համար կարելի է անմիջապես ցուցադրել երկրորդ տարբերակը, որ առաջինի շարունակությունն է: Ամպարարը քաշում է աջ ձեռքը, բաց թողնելով ձախ ձեռքի դաստակը, իսկ քանոնը դարձյալ չի ընկնում: Դա լինում է այսպես. կատարողը նախօրոք ձախ ձեռքի մեջ թաքցնում է երկրորդ քանոնը: Անհրաժեշտ պահին հանում է թևքից: Այն սեղմում է առաջին քանոնին և վերջինս վայր չի ընկնում:







Ո՞ր նարինջը կտրել

Սկահակի մեջ նարինջներ են: Կատարողը բեմ է հրավիրում հանդիսականներից մեկին և առաջարկում ուշադիր զննել նարինջները: Հանդիսատեսը ոչինչ արտառոց չի գտնում:

«Ո՞ր նարինջը կտրեմ»— հարցնում է ամպարարը:

Հանդիսատեսը ցույց է տալիս: Ամպարարը կտրում է նարինջը և տալիս հանդիսատեսին: Վերջինս զարմանքով տեսնում է, որ նարնջի ներսում մետաղադրամ կա:

Անհրաժեշտ է.

1. 3—4 նարինջ:
2. Սկահակ:
3. Խոհանոցային դանակ:
4. Պլաստիլինի փոքրիկ կտոր:

Գաղտնիքն այն է, որ ամպարարը նախօրոք կոպեկը պլաստիլինով փակցնում է դանակին, և այն պահին, երբ կտրում է նարինջը, բութ մատով աննկատելիորեն մետաղադրամը գցում է նարնջի երկու կեսերի միջև:



Մերթ հայտնվում է, մերթ անհետանում

Ամպարարի ձեռքին սովորական շարֆ է: Նա մի քանի անգամ թափահարում է այն և, ո՞վ հրաշք, շարֆի ծայրին հանգույց է հայտնվում: Եվս մի քանի թափահարում և... հանգույցն անհետանում է: Գործողությունը կրկնվում է մի քանի անգամ, և հանգույցը մերթ հայտնվում է, մերթ անհետանում:

Գաղտնիքը շատ պարզ է: Անհրաժեշտ է ունենալ 1,5—2 մետր երկարությամբ շարֆ: Դրա ծայրերից մեկը հանգուցված է: Դուրս գալով բեմ, ամպարարը բռնում է հանգույցից: Մի քանի անգամ թափահարելով, նա արագ բռնում է հակառակ ծայրից, միաժամանակ բաց թողնելով հանգուցվածը: Այնուհետև նույնը կրկնում է և հանգույցն «անհետանում է»: Այդպես մի քանի անգամ ամպարարը մերթ «հանգուցում է» շարֆը, մերթ «քանդում» հանգույցը...



Ամպարարություն փոքրիկ գնդակով

Դուք հանում եք գրպանից սեղանի թենիսի սովորական գնդակ և բռնում աջ ձեռքում, ինչպես ցույց է տրված № 1 նկարում:

Ցույց տալով, որ ձախ ձեռքը դատարկ է, գնդակը աջ ձեռքից փոխանցում եք ձախին, ընդ որում՝ աջը թողնելով բաց (նկ. 2): Բացելով ձախ ձեռքի ափը, ցույց եք տալիս, որ այն նույնպես դատարկ է՝ գնդակն անհետացել է:

Գնդակը կարող է հայտնվել ամենաանսպասելի տեղերում: Օրինակ, աջ ձեռքը դնում եք ձեր կրծքին և այնտեղից հանում գնդակը:

Գնդակը դնում եք աջ ձեռքի բռունցքի մեջ (նկ. 5) վերցնում այն ձախով... գնդակը նորից անհետացավ՝ չկա ոչ աջ և ոչ ձախ ձեռքում: Այն հայտնվել կարող է դարձյալ ամենաանսպասելի տեղերում: Այն կարելի է հանել պատից, նույնիսկ՝ հանդիսատեսի թևքից:

Գաղտնիքը.

Սա ամենաբարդ ձեռնածություններից մեկն է: Մինչ այն ցուցադրելը հարկավոր է երկար ու համառորեն պարապել: Նրա առանձին դրվագներ բավականին պարզ են և կարող են ցուցադրվել ոչ մեծ մարզումներից հետո, սակայն տպավորությունն ավելի մեծ կլինի որոշակի հաջորդականությամբ դրվագների ողջ համալիրը ցուցադրելիս:

Վերը նկարագրված դրվագները կարելի է փոխել ու բարդացնել՝ փորձառություն ձեռք բերելուց հետո:

Սկսենք առանձին տարրերից:

Գնդակի անհետացման առաջին տարբերակը

Գնդակը բռնեք աջ ձեռքում այնպես, ինչպես ցուցադրված է 5-րդ նկարում, հետո մատների օգնությամբ այն տեղափոխեք 5—6-րդ նկարներում ցուցադրված ձևով: Ուղղելով մատները, հասեք նրան, որ գնդակը մնա ձեռքում՝ սեղմված միայն ափի մկաններով (6): Ընդ որում, ափը պիտի համարյա ամբողջությամբ բաց լինի:

Այս ձեռնածությանը կատարելապես տիրապետելու համար անհրաժեշտ են ամենօրյա վարժանքներ՝ առանձին դրվագների անընդհատ բարդացմամբ և նորերին վարժվելով: Հենց որ մատները վարժվեն գնդակը տեղափոխել ափի անհրաժեշտ մասը, իսկ գնդակն սկսի սեղմված մնալ թեկուզ և ոչ ամբողջովին բաց ձեռքում, անհրաժեշտ կլինի անմիջապես անցնել նաև մյուս ձեռքով այդ դիրքը սովորելուն:

Առանձին տարրերի մեծ քանակից կազմված այս ամպարարության ցուցադրման ժամանակ, լավագույն արդյունք ստացվում է ձեռնածության մեծ արագության պայմաններում: Հանդիսատեսը բառացիորեն շշմում է գնդակի անընդհատ հայտնվելուց և անհետանալուց:





Պրոֆեսիոնալ ձեռնածուն այն կարող է ցուցադրել 2—3 րոպե:

Մեր դեպքում, երբ առանձին տարրերի քանակը սահմանափակ է, ավելի լավ է ցուցադրումը կատարել ավելի դանդաղ տեմպով՝ ձեռնածության մոտավոր ժամանակը՝ 1—2 րոպե:

Այդ դրվագում գնդակի հայտնվելու բացատրությունը շատ պարզ է: Քանի որ «անհետացած» գնդակը ձեր աջ ձեռքին է, ապա բաց ափը մոտեցնելով ցանկացած առարկայի կամ, ասենք՝ ձեր կրծքին, հպեք գնդակն այդ առարկային: Գլորելով գնդակը առարկայի վրայով դեպի ձգված մատները, բռնեք այն և քաշեք ձեռքն առարկայից:

Գնդակը դրեք բռունցքված աջ ձեռքին (նկ. 3): Այնուհետև ձախով «վերցրեք» գնդակը և սեղմեք ափում: Աջ ձեռքով կատարում են մինչ այդ արդեն սովորած՝ գնդակը ափին փոխանցելու ձեռնածությունները: Բացելով ձախ ձեռքի ափը, ցույց տվեք, որ գնդակն անհետացել է, ապա վերադարձրեք այն արդեն բացատրած ձևով՝ միայն թե այլ տեղից: Դա բազմազանություն է ստեղծում և խանգարում գաղտնիքը կռահելուն:

Այս հնարքներին կատարելապես տիրապետելուց հետո կարելի է ինքնուրույն հնարել բազմաթիվ զվարճալի տարբերակներ: Կարևորը ձեռքերն են և կատարողի երևակայությունը:



Գաղտնիքով քսակը

Անպարարի ձեռքին սովորական քսակ է (դրամապանակ)։ Նա բացում է քսակը և ցուցադրում հանդիսատեսին՝ այն դատարկ է։ Հետո, ի զարմանս բոլորի, արագ հանում է նրա միջից 50 սանտիմետրանոց քանոն։

Գաղտնիքը շատ պարզ է։ Քսակի տակը կտրված է։ Քանոնը նախապես թաքցրած է ձեռքում, իսկ ծայրը գտնվում է կատարողի պիջակի կամ բաճկոնի թևքում։

Ցուցադրելով դատարկ քսակը, անպարարն անցքից քաշում է քանոնը, ինչպես այդ ցույց տրված նկարում։



Հրաշք թերթիկը

Սեղանի վրա իրարից քիչ հեռու երկու բաժակ է դրված։ Ձեր հանդիսատեսին թերթիկ տվեք և առաջարկեք այն դնելով բաժակների վրա, թերթիկի վրա կանգնեցնել մի երրորդ բաժակ։ Իհարկե, թերթիկը չի կարող պահել բաժակը։

Գաղտնիքը հետևյալն է.

Որպեսզի բաժակը կանգնի, անհրաժեշտ է թուղթը ծալքավորել, ինչպես ցույց է տրված նկարում։



Թվերի գուշակում

Այս հմարը կարելի է ցուցադրել սենյակում, ինչպես, ի դեպ, մի քանի այլ հմարներ: Հավաքեք ձեր ընկերներին և սկսեք:

Նա, ով գուշակելու է թվերը (կատարողը), պետք է դուրս գա սենյակից: Այդ ժամանակ հանդիսականներից որևէ մեկը բարձրաձայն անվանում է եռանիշ որևէ թիվ: Կատարողը մտնում է սենյակ և, մի փոքր մտածելով, ճշտիվ գուշակում է թիվը:

Ընդ որում, նա այդ անում է շատ ու շատ անգամներ և առանց որևէ սխալի: Ինչպե՞ս է այդ նրան հաջողվում: Հրա՞շք է:

Սակայն տարօրինակ ոչինչ չկա: Պարզապես հանդիսականների մեջ, ինչպես նախորդ դեպքերում, գտնվում է հավատարիմ ու ճարպիկ օգնականը: Սակայն նա պետք է աշխատի ոչ թե ձեռքերով, այլ... ոտքերով: Այո, այո, մի զարմացեք...

Ահա, խնդրեմ աղյուսակը: Դա պայմանական կոդ է՝ թիվը գուշակող բանալին: Ոտքերի յուրաքանչյուր դիրք՝ որոշակի թիվ է: Տասը թիվ՝ տասը դիրք: Ե՛վ կատարողը, և՛ օգնականը պետք է ինչպես հարկն է սովորեն դրանք և ոչ մի դեպքում չսխալվեն:

Եվ այսպես.

0. կրունկներն ու ոտնաթաթերը միացած են իրար
1. աջ ոտքը տեղում է, ձախ ոտնաթաթը՝ առաջ
2. ձախ ոտնաթաթը տեղում է, աջը՝ մի քիչ առաջ և կողք (ոտնաթաթերի միջև անկյունը՝ 15°)
3. ձախը տեղում, աջ ոտնաթաթը՝ ուղիղ կողք (ոտնաթաթերի միջև անկյունը 90°)
4. ձախը դարձյալ տեղում, աջը՝ մի քիչ հետ և կողք
5. ձախ ոտքը տեղում, աջը՝ ետ
6. այժմ՝ աջը տեղում, իսկ ձախը՝ մի քիչ կողք ու հետ
7. աջը՝ տեղում, ձախ ոտնաթաթը՝ ուղիղ կողք (անկյունը՝ 40°)
8. աջը՝ տեղում, ձախը՝ քիչ առաջ և կողք (անկյունը՝ 90°)
9. կրունկները միասին, ոտնաթաթերը՝ բացված:

Հիմա՝ նստեք: Ենթադրենք թիվն է 248-ը: Կատարողը մտնում է սենյակ և օգնականը նրան «հուշում է» ոտքերով:

2. ձախ ոտքը տեղում, աջը՝ մի քիչ առաջ և կողք (անկյունը՝ 45°)
4. ձախը՝ տեղում, աջը՝ ետ և կողք
8. աջը տեղում, ձախը՝ առաջ և կողք (անկյունը՝ 45°)

Եթե եռանիշ թվի գուշակությունն արդեն ամբողջովին յուրացված է, ապա կարելի է փաստորեն գուշակել նաև քառանիշ թիվ:

Դե, ինչպե՞ս, դժվա՞ր է, այո՞... Ոչինչ, ինչպես ասում են՝ «ծանր է պարապելիս, հեշտ կլինի մարտում»: Դրա փոխարեն այս հնարքը հանդիսականի վրա մեծ տպավորություն է գործում, և դուք կպարգևատրվեք բուռն ծափահարություններով: Սակայն ձեր օգնականի համար առավել դժվար կլինի, չէ՞ որ նա պետք է սովորի այն մտացածին «չեչոտկան» և կատարելապես տիրապետի դրան: Ձեզ երկար փորձեր են սպասվում, բայց հավատացեք, այս հմարն արժանի է դրան...

Հրաշք շիշը

Ճգպարարը հանդիսականներին ցուցադրում է սովորական մի շիշ: Այնուհետև սեղանից վերցնում է լվացքի պարանի կտորը, դրա ծայրը մտցնում շշի մեջ և... շիշը կախվում է պարանից: Ճգպարարը պտտեցնում է պարանը, և շիշը շրջանակներ է գծում՝ չպոկվելով:

Գաղտնիքը պարզ է: Մուգ ապակուց շշի մեջ նախօրոք մտցրեք սովորական խցան՝ ահա և բոլորը: Հետո պարանի ծայրը մի քանի անգամ մտցրեք շշի մեջ՝ ցուցադրելով, որ շշում ոչ մի գաղտնի հարմարանք չկա: Իսկ վերջին անգամ պարանը մտցրեք ինչքան հնարավոր է խորը և շիշը շրջեք: Երբ խցանը կընկնի, մի փոքր ձգեք պարանը, և այն կխցանվի: Այժմ կարող եք պարանն ու շիշը պտտեցնել և նույնիսկ նետել դեպի հանդիսատեսը, շիշը երբեք չի պոկվի: Վերջում հանեք պարանը շշից և երկուսն էլ ցուցադրեք հանդիսատեսին, որպեսզի նրանք համոզվեն, որ ոչ մի գաղտնիք էլ չկա:



Չորս բաժակ

Սեղանին ջրով լի չորս թափանցիկ բաժակ է: Կատարողը վերցնում է առաջին բաժակը, բարձրացնում է այն և... ջուրը կանաչ գույն է ստանում: Ճգպարարն այն դնում է սեղանին, վերցնում երկրորդ բաժակը, բարձրացնում և ջուրը... կարմրում է: Երրորդ բաժակում ջուրը դեղնում է, չորրորդում՝ կապույտ գույն ստանում:

Ամբողջ գաղտնիքը մի պարզագույն հարմարանք է: Եզրային կուլիսների միջև նախապես կապվում է սև թելը՝ ճգպարարի գլխավերևով: Կենտրոնում, իրարից քիչ հեռու, կախվում է չորս սև թել: Դրանց ծայրերին նախապես ցանվում է տարբեր գույնի անիլինային փոշի: Ցուցադրման ժամանակ ճգպարարը բաժակը մոտեցնում է թելերից մեկի ծայրին: Թելը հայտնվելով ջրում, ակնթարթորեն «ներկում» է այն համապատասխան գույնով:



Բումերանգ քարտը

Կան ձեռնածություններ, որոնց ցուցադրումն ընդամենը ակնթարթներ է տևում: Դրանցից է «Բումերանգ քարտը»:

Անպարարը գրպանից հանում է քարտը, դնում ձախ ձեռքի բռունցքին, աջով կտտացնում քարտի անկյունին: Նետվելով օդ, քարտը շրջանցում է անպարարին և փափուկ վայրէջք կատարում նրա ափում: Անպարարն այն կրկնում է մի քանի անգամ, իսկ քարտը խոնարհաբար ենթարկվում է նրան:

Անպարարության գաղտնիքը և ցուցադրումը:

Անհրաժեշտ է երկու խաղաքարտ և մեկ մետրանոց կապրոնե թել: Թելի ծայրը հագցնում են մի քարտի կենտրոնին, հետևում ամրացնում, սոսնձում երկրորդ քարտը: Թելի ազատ ծայրին օղակ են կապում: Ցուցադրելուց առաջ, քարտը պիջակի կողքի գրպանում է, իսկ թելի ծայրն ամրացված է վերնաշապիկի ամենավերին կոճակին: Եթե կատարողն ակնոց է կրում, ապա ավելի լավ է թելի ծայրն ամրացնել ակնոցի անրակից: Այժմ կարելի է սկսել:

Քարտը դնելով ձախ ձեռքի բռունցքին, անպարարը կտտացնում է դրա անկյունին: Քարտը բումերանգի նման թռչելով անպարարի շուրջը, կվերադառնա ափին:





Գլխի կընկնե՞ս...

Տեսեք, սեղանին լուցկու երկու տուփ կա: Հետաքրքիր է՝ դատա՞րկ են, թե՞ ինչ-որ բան կա նրանց մեջ: Հիմա կստուգենք:

Ճպարարը մոտենում է սեղանին, վերցնում տուփերից մեկը և մի քանի անգամ թափահարում: Հանդիսատեսը ձայն չի լսում, ուրեմն տուփը դատարկ է: Ճպարարը վերցնում է մյուս տուփը, թափահարում: Պարզորոշ լսվում է, որ դրա մեջ ինչ-որ բան կա: Նշանակում է, մտածում է հանդիսատեսը, երկրորդ տուփը դատարկ չէ: Այդ ժամանակ ճպարարը փոխում է տուփերի տեղերը. վերցնում այն տուփը, որի մեջ կարծես լուցկի կար, և թափահարում: Ոչ մի ձայն, դրա փոխարեն «աղմկում» է քիչ առաջվա դատարկ տուփը: Ճպարարը էլի մի քանի անգամ փոխում է տեղերը, և լուցկիները հայտնվում են մերթ մեկ, մերթ մյուս տուփի մեջ: Վերջապես ո՞ր տուփում են լուցկիները:

Վերջում ճպարարը բացում է տուփերը, և բոլորը տեսնում են, որ երկուսն էլ դատարկ են:

Ո՞րն է գաղտնիքը:

Այս ճպարարության համար անհրաժեշտ է լուցկու երեք տուփ: Երկուսը՝ դատարկ, երրորդում լուցկու մի քանի հատիկ (կարելի է նաև կոճակներ կամ մետաղադրամ):



Դատարկ տուփերը դրված են սեղանին, իսկ երրորդը սովորական ռեզինով ամրացված է ճպարարի որևէ ձեռքին (ասենք՝ ձախին), ինչպես ցույց է տրված նկարում: Ճպարարը բաճկոնը հագնում է այնպես, որ թևքը ծածկի «գաղտնի» տուփը:

Դե, իսկ մնացածը տեխնիկայի հարց է: Ամեն ինչ կախված է նրանից, թե ճպարարը որ ձեռքը կթափահարի: Եթե տուփը բռնի ձախ ձեռքում և թափահարի՝ ձայն կլսվի, աջ ձեռքում բռնի՝ ոչ մի ձայն:

Իհարկե, ցուցադրելուց առաջ անհրաժեշտ է մի քիչ սպասել, որպեսզի չշփոթես: Արտաքուստ հեշտ է, սակայն ճարպկությունը ձեռք է բերվում պարապմունքների շնորհիվ միայն:



Կարելի՞ է, արդյոք, հանել վերնաշապիկը՝ չհանելով միջակը

Այն ճպարարությունները, որոնց մասնակցում է նաև հանդիսատեսը, մեծ հաջողություններ են ունենում: Այդ պատճառով յուրաքանչյուր ձեռնածու նման ճպարարություններ անպայման պիտի մտցնի իր ծրագրում:

Կատարողը բեմ է հրավիրում հանդիսականներից մեկին և նստեցնում աթոռին: Ճպարարը ժպտալով մոտենում է հանդիսասրահի պատվիրակին և ուշադիր նայում է նրան: Հետո բռնում է ձեռքը և արձակում վերնաշապիկի թևքի կոճակները: Նույնը կատարում է մյուս թևքի հետ:

— Եվ այսպես, թևքերն ազատ են,— ասում է ճպարարը,— այժմ հանենք փողկապը և արձակենք վերին երեք կոճակները: Հանդիսականները շշմած նայում են այդ ողջ գործողությանը: Իսկ ճպարարը հետևից մոտենալով հանդիսատեսին, բռնում է վերնաշապիկի օձիքից և սկսում է այն հանել պիջակի տակից: Զարմացած հանդիսականների աչքի առաջ վերնաշապիկը «հանվում» է և հայտնվում ճպարարի ձեռքին:

Այժմ հանդիսատեսը նստած է պիջակով, բայց առանց վերնաշապիկի: Սա, ինչ խոսք, առաջացնում է բուռն ծափահարություններ և լիաթոք ծիծաղ: Իսկ ճպարարը, պահպանելով դեմքի լուրջ արտահայտությունը, առաջարկում է բեմ բարձրանալ որևէ կնոջ: Ցանկացող, իհարկե, չի գտնվի:

Գաղտնիքը:

Իհարկե, նման «մերկացումը» իրականում կատարել հնարավոր չէ: Այն ունի իր գաղտնիքը: Պարզապես ճպարարը նախօրոք պայմանավորվում է իր ընկերներից որևէ մեկի հետ և նրան նախապատրաստում: Օգնականի խնդիրն է վերնաշապիկը ոչ թե հագնել, այլ գցել վրան և կոճկել վերին կոճակները: Փողկապը կապում են ըստ հարկի, ձեռքերը ոչ թե մտցվում են վերնաշապիկի թևքերի մեջ, այլ միայն կոճկում են մանժետները: Այնուհետև վերնաշապիկի վրայից օգնականը հագնում է պիջակը: «Դրածո» հանդիսականը հանգիստ նստում է դահլիճում և սպասում իր հերթին և, երբ ճպարարը խնդրում է հանդիսականներից որևէ մեկին բեմ բարձրանալ, նա ցանկություն է հայտնում օգնել:

Կախարդական տոպրակը

Բեմում աթոռ է՝ թիկնակով: Նստատեղին ջրով լի շիշ է դրված, իսկ թիկնակին՝ մի քանի թերթ թուղթ: Ամպարարը հանդիսականներին ցուցադրում է թուղթը և շիշը: Դրանք սովորական են:

Հետո նա շիշը դնում է տեղը, իսկ թղթից տոպրակ պատրաստում: Նորից վերցնելով շիշը, ջուրը լցնում է թղթե տոպրակի մեջ: Շիշը դնելով աթոռին, ամպարարը գրպանից հանում է լուցկին և... այրում տոպրակը: Հանդիսատեսի աչքի առաջ ջրով լի տոպրակն այրվում է մինչև վերջ:

Գաղտնիքը և ցուցադրումը

Գաղտնիքն այն է, որ աթոռի հետևում՝ թիկնակից կախված է երկրորդ տոպրակը՝ անջրանցիկ նյութից պատրաստված: Դրա ծավալը հավասար է 22ի ծավալին, կամ մի քիչ ավելի է: Թղթե տոպրակն այնպես պետք է պատրաստել, որ անջրանցիկ տոպրակը հանգիստ մտնի նրա մեջ:

Ամպարարը աջ ձեռքով շիշը վերցնելիս, կռանում է աթոռի վրա և այդ պահին հետևից աննկատելիորեն թղթե տոպրակը հագցնում է անջրանցիկ տոպրակին: Թելի երկարությունն այնպիսին է, որ հնարավորություն է տալիս տոպրակը բարձրացնել աթոռից վեր և ջուրը լցնել նրա մեջ: Կռանալով երկրորդ անգամ, որպեսզի շիշը դնի տեղը, ամպարարը ճկուն և աննկատելի հանում է թղթե տոպրակը և ջրով լի անջրանցիկ տոպրակը կախում է թելից: Հետո ամպարարն ուղղվում է և այրում դատարկ տոպրակը:



Ի՞նչ է թաքցրած

Աճպարարի օգնականի ձեռքին խորանարդաձև սովորական տուփ է՝ կափարիչով: Օգնականը բացում է այն և ցուցադրում հանդիսականներին: Տուփը դատարկ է: Հանդիսականները ցանկության դեպքում կարող են քննել տուփը և համոզվել, որ ոչ մի գաղտնիք այն չունի:

Այնուհետև հմտերգավարը դիմում է դահլիճին, խնդրելով մի քանի մանր առարկաներ. ժամացույց, թաշկինակ, մատիտ, հինգկոպեկանոց մետաղադրամ և այլն:

Օգնականը մոտենում է հանդիսականներից մեկին և վերցնում որևէ իր: Ենթադրենք, այն ժամացույց է: Այն դնում է տուփի մեջ և ծածկում: Տուփը ոչ մի անցք չունի, այսինքն, հնարավոր չէ տեսնել նրա ներսը: Հմտերգավարը տուփը դնում է աճպարարական սեղանին:

Ահա կուլիսներից դուրս է գալիս աճպարարը: Նա, թեև ոչինչ չի տեսել, պետք է ճշտիվ որոշի, թե ինչ է թաքցրած արկղում: Եվ նա, ի զարմանս բոլորի, հրաշալի է լուծում այդ խնդիրը: Ինչ էլ որ օգնականը դնի տուփի մեջ, աճպարարը գուշակում է:

Դա ցուցադրելու համար անհրաժեշտ է ունենալ խորանարդաձև տուփ՝ կափարիչով: Խորանարդի չորս կողային հարթությունները պետք է ներկված լինեն տարբեր գույներով՝ կապույտ, կարմիր, կանաչ, դեղին:

Դուք, հավանաբար, արդեն գլխի եք ընկնում, թե աճպարարն ու իր օգնականը (նույնիսկ՝ հմտերգավարը) պայմանավորվել են, որ



յուրաքանչյուր գույն համապատասխանում է որևէ առարկայի:

Ասենք.

կապույտ՝ թաշկինակ

կանաչ՝ հինգկոպեկանոց մետաղադրամ

կարմիր՝ ժամացույց

դեղին՝ մատիտ

Կարելի է, իհարկե, օգտագործել տուփի ևս երկու կողմը (միայն չմոռանաք այդ կողմը այլ գույներով ներկել): Այս պարագայում քողարկվող առարկաների թիվն էլ կհասնի 6-ի:

Եվս մի պարտադիր պայման. չի կարելի հանդիսատեսից վերցնել այնպիսի առարկա, որի վերաբերյալ աճպարարի ու օգնականի միջև պայմանավորվածություն չկա: Այլապես ամեն ինչ կձախողվի:

Մնում է միայն տուփը ճիշտ դնել աճպարարական սեղանին: Քանի որ աճպարարը դուրս է գալիս կուլիսներից, ապա նա տեսնում է միայն խորանարդի միայն իրեն ուղղված կողմը: Ուրեմն, օգնականը, առանց հանդիսատեսի ուշադրությունը գրավելու, պետք է տուփը սեղանին դնի այնպես, որ կուլիսներին ուղղված լինի առարկային համապատասխանող գույնով ներկված կողմը:

Պարապեք, լավ հիշեք գույներն ու առարկաները: Կատարեք ջանադրաբար և մանրակրկիտ, բայց և թեթև ու անկաշկանդ:



«Ինչպե՞ս անցնել թղթի միջով»

— Ի՞նչ եք կարծում, բարեկամներ, կարելի՞ է անցնել թղթի միջով,— հարցնում է ճգպարարը՝ ցուցադրելով ոչ մեծ մի թուղթ՝ 12 սմ×16 սմ կամ 14 սմ×18 սմ չափերով:

Խնդիրն, այո, հեշտ չէ: Բոլորը մտածմունքի մեջ են: Այդ ժամանակ ճգպարարը վերցնում է մկրատը, թղթի վրա ինչ-որ կտրվածքներ է անում, արտասանում կախարդական բառերը. «Ախալայ-մախալայ», հետո... անցնում նրա միջով: Դուք կարծում եք գաղտնիքը կախարդական բառե՞րն են: Ոչ: Գաղտնիքը թուղթը հատուկ ձևով կտրելն է:

Թուղթը երկտակ ծալում են՝ համատեղելով կարճ կողմերի անկյունները և ծալքից կտրվածք անում, իսկ հետո անում են երկայնակի կտրվածքներ, ինչպես ցույց է տրված նկարում: Եթե բացեք կտրված թուղթը, կստանաք մի օղակ, որի միջով մեկ չէ, երկու մարդ էլ կանցնի: Փորձեք, փորձեք և կստացվի: Սա ես՝ իբրև կախարդ եմ ձեզ խոստանում:



Թռչող խաղաքարտեր

Ճգպարարը բեմ է դուրս գալիս լայնեզր գլխարկով: Հանելով գլխարկը, խոնարհվում է հանդիսատեսին: Այնուհետև գլխարկը դնում է հատակին՝ եզրերով վեր և գրպանից խաղաքարտերի կապուկ հանում:

Ճգպարարը բեմ է հրավիրում ցանկացողներին և առաջարկում փորձել խաղաքարտերը գցել գլխարկի մեջ: «Սակայն խոնարհվել չի կարելի,— ասում է նա,— քարտերը պետք է գցել ուղիղ կանգնած»:

Հանդիսականները փորձում են, սակայն, չգիտես ինչու, ոչ մի խաղաքարտ գլխարկի մեջ չի ընկնում: Իսկ ճգպարարը մի քանի խաղաքարտ վերցնում և անվրեպ նետում է գլխարկի մեջ:

Գաղտնիքը հետևյալն է.

Որպես կանոն, հանդիսականները փորձում են քարտերը գլխարկի մեջ նետել ուղղաձիգ դիրքով: Այդ դեպքում խաղաքարտերը վայրէջք են կատարում հատակին: Իսկ ճգպարարը քարտերը նետում է հորիզոնական դիրքով: Միայն այդ դեպքում է չվրիպելու հավանականությունը մեծ: Ձեռքն անհրաժեշտ է պահել ուղիղ գլխարկի վերևում:







Առաջաբան 5
Ձեզ չեն խաբի 10
Հինգերորդը՝ «գաղտնի» 12
Պարզունակ հարմարանք 15
Երկու գավաթ 16
Ուր կորավ մատանին 18
Յուրատեսակ հնարք մեսաղադրամով 20
Մեղավորը «գլխարկն» է 22
Այ քեզ խնձոր 24
Կախարդական մատնոցը 27
Համերաշխ թաշկինակներ 28
Թռչող փայտիկը 29
Օղակն անհետանում է 30
Ծաղիկնե՞ր, որտեղից 32
Մտքերի ընթերցում՝ հեռվից 34
Հիանալի հիշողություն 38
Փուչիկների աշխարհում 40
... Եվ թաշկինակների 41
Կախարդական քանոնը 42
Ո՞ր նարինջը կտրել 44
Մերթ հայտնվում է, մերթ անհետանում 45
46 Աճպարարություն փոքրիկ գնդակով
50 Գաղտնիքով քսակը
51 Հրաշք թերթիկը
52 Թվերի գուշակում
54 Հրաշք շիշը
55 Զորս բաժակ
56 Բումերանգ քարտը
58 Գլխի կընկնե՞ս...
60 Կարելի՞ է, արդյոք, հանել վերնաշապիկը՝ չհանելով տիշակը
62 Կախարդական տոպրակը
64 Ի՞նչ է թաքցրած
66 «Ինչպե՞ս անցնել թղթի միջով»
67 Թռչող խաղաքարտեր





Թարգմանիչ՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խմբագիր՝ Խ. ԽԱՉԻԿՅԱՆ
Նկարիչ՝ Վ. ՔՈՉԱՐ

Հանձնված է շարվածքի 18.11.91 թ.։ Ստորագրված է տպագրության. 23.03.92 թ.։ Չափսը 84×90/32։ Պատվեր 1026։ Տպաքանակ՝ 15000։ 2,25 տպագրական մամուլ։ Գինը պայմանագրային։

Տպագրված է Նախարարների խորհրդին կից «Պարբերական» հրատարակչության տպարանում։